ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/83

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
Բողոքաբեր՝ «Դամկար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Դամկար» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/114» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, կահույքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Դամկար» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 15.07.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/114» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում հանձնաժողովի 29.06.2020թ.-ի տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 1.4 կետով կայացրած որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 15.07.2020թ.-ին:

16.07.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/83 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

22.07.2020թ.-ին, 29.07.2020թ.-ին և 07.08.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 29.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.08.2020թ.-ին:

2. «Դամկար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Դամկար» ՍՊԸ-ն 15.07.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ԵՊՀ» հիմնադրամի կարիքների համար «Կահույքի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/114» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև Ընթացակարգ/:

Սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով, ի թիվս այլ մասնակիցների, էլեկտրոնային հայտ է ներկայացրել նաև «Դամկար» ՍՊԸ-ն:

Կապված վերջին շաբաթների ընթացքում ինտերնետային կապի խնդիրների հետ «Դամկար» ՍՊԸ-ն հնարավորություն չի ունեցել հայտը բեռնել սեփական www.armeps.am կայքի էջից և որպեսզի հնարավորություն ունենա մասնակցության հայտ ներկայացնելու «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/114» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին օգտվել է այլ www.armeps.am կայքում գրացնված ՍՊԸ-ի էջից /որի ինտերնետային սպասարկողը այլ Ընկերություն է/ և բեռնել հայտը «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի www.armeps.am կայքի էջից:

Սակայն «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/114» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 1.4 կետի համաձայն «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի հայտը մերժվում է, քանի որ հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացված են այլ կազմակերպության անունից «Դամկար» ՍՊԸ-ի, այդ թվում նաև գնային առաջարկը /հավելված 2/, որը փոփոխման ենթակա փաստաթուղթ չի հանդիսանում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Դամկար» ՍՊԸ-ն ինտերնետային հասանելիության ոչ լիարժեք, թերի աշխատելու պատճառով զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Մասնավորապես՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 1.4 կետի համաձայն «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի հայտը մերժվում է քանի որ հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացված են այլ կազմակերպության անունից «Դամկար» ՍՊԸ-ի, այդ թվում նաև գնային առաջարկը /հավելված 2/, որը փոփոխման ենթակա փաստաթուղթ չի հանդիսանում:

Մինչդեռ մասնակցության հայտ ներկայացրել է ոչ թե «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն, այլ «Դամկար» ՍՊԸ-ն ինչն հավաստվում է «Դամկար» ՍՊԸ-ի կողմից հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը հաստատված լինելու հանգամանքը:

Փաստացիորեն հայտը ներբեռնելու արդյունքում Բողոքաբերը ներբեռնել է իր հայտը «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի www.armeps.am կայքի էջից, ինչը տարակուսանք է առաջացրել գնահատող հանձնաժողովի մոտ, որն էլ մեր կարծիքով պատճառ է հանդիսացել, որ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մերժվում է «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի հայտը, քանի որ հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացված են «Դամկար» ՍՊԸ-ի անունից:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Դամկար» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/114» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում հանձնաժողովի 29.06.2020թ.-ի տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 1.4 կետով կայացրած որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

Ընկերությունը ներկայացրած բողոքի պահանջի հստակեցմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Դամկար» ՍՊԸ-ի կողմից 15.07.2020թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/83 ծածկագրով բողոքը, որով «Դամկար» ՍՊԸ-ն խնդրել է պարտավորեցնել «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/114» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում հանձնաժողովի 29.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 1.4 կետով կայացրած որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

Սյուն գրությամբ «Դամկար» ՍՊԸ-ն ներկայացնում է նոր հստակեցված պահանջներ և խնդրում է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/83 ծածկագրով բողոքի քննության համար հիմք ընդունել բացառապես նոր հստակեցված պահանջները:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Դամկար» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 1.4 կետով, 29.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.4 կետով ե 14.07.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.4 կետով «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումները:
2. Դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 1.5, 1.6, 1.7 և 1.8 կետերով կայացրած որոշումները:
3. Դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.5, 1.6, 1.7 ե 1,8 կետերով կայացրած որոշումները:
4. Դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.5, 1.6, 1.7 և 1,8 կետերով կայացրած որոշումները:
5. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի www.armeps.am կայքի էջից «Դամկար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատելու վերաբերյալ:

3. <u>«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 16.07.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/10631-2020 գրությամբ դիմել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին՝ հնարավորություն տալով «Դամկար» ՍՊԸ-ի կողմից 15.07.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 20.07.2020թ.-ի թիվ 01/920-20 գրությամբ, ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնել է նաև հետևյալը.

«Ձեր վերոնշյալ գրությունը ուսումնասիրելուց հետո («Դամկար» ՍՊԸ-ի կողմից «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կարիքների բավարարման համար կազմակերպված «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/114» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) արդյունքում ներկայացված բողոքի վերաբերյալ) հայտնում ենք հետևյալը.

1) Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով 14 մասնակից: Գնահատող հանձնաժողովի կողմից նշված մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում հանձնաժողովն արձանագրել է (արձանագրությունը կցվում է), որ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում կցված են եղել «Դամկար» ՍՊԸ-ի փաստաթղթերը:

Ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 4.1 կետի համաձայն՝ ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնում է հայտ: Հայտը՝ Հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Հրավերի վերոնշյալ կարգավորման համաձայն՝ Ընթացակարգի մասնակից համարվելու համար «Դամկար» ՍՊԸ-ն պետք է համակարգի միջոցով ներկայացրած լիներ հայտ, սակայն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած վերոնշյալ մասնակիցների մեջ «Դամկար» ՍՊԸ-ն բացակայում է:

2) Հրավերի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են Հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում Հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հրավերի 8.18 կետի համաձայն՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հաշվի առնելով այն, որ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը, էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվել են «Դամկար» ՍՊԸ-ի կողմից, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Հրավերով նախատեսված վերոնշյալ պահանջները մերժել է «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի հայտը:

Միևնույն ժամանակ պետք է հայտնենք Ձեզ, որ մրցույթի արդյունքների գնահատումը առավել ճիշտ կատարելու նպատակով 02.07.2020թ.-ին «ԵՊՀ» հիմնադրամի կողմից, պարզաբանում ստանալու համար, կատարվել էր հարցում՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը, ի պատասխան, որի 15.07.2020թ.-ին (հայտերի գնահատումն վերջնաժամկետը լրանալուց մի քանի օր հետո) ստացվել էր պատասխան (կցվում են), որտեղ հաստատվում էր գնահատող հանձնաժողովի կողմից որոշում կայացնելու լիակատար իրավասությունը և, որ «Դամկար» ՍՊԸ-ն ևս գրանցված է armeps.am գնումների համակարգում:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/83 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կահույքի ձեռքբերման նպատակով 22.06.2020թ.-ին հայտարարվել է «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/114» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն:

iii. «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտին կից փաստաթղթերը՝ Հրավերի Հավելված 1-ը՝ դիմում-հայտարարությունը, Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, ներկայացվել են «Դամկար» ՍՊԸ-ի տվյալներով:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 29.06.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 1.4-րդ կետի համաձայն՝ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է, քանի որ հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացված են այլ կազմակերպության անունից՝ «Դամկար» ՍՊԸ-ի, այդ թվում՝ նաև գնային առաջարկը (հավելված 2), որը փոփոխման ենթակա փաստաթուղթ չի հանդիսանում:

v. Նույնաբովանդակ արձանագրութուն է կազմվել Հանձնաժողովի նաև 29.06.2020թ.-ի և 14.07.2020թ.-ի տեղի ունեցած նիստերի համապատասխանաբար թիվ 3 և թիվ 4 արձանագրություններով, այն որ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվում է քանի-որ հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացված են այլ կազմակերպության անունից՝ «Դամկար» ՍՊԸ-ի, այդ թվում նաև գնային առաջարկը (հավելված 2), որը փոփոխման ենթակա փաստաթուղթ չի հանդիսանում:

vi. 30.06.2020թ.-ին Հանձնաժողովին ուղղված գրության համաձայն՝ Թամարա Սայադյանը հայտնել է, որ համակարգում է ինչպես «Դամկար» ՍՊԸ-ի, այնպես էլ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի գնումները: Սույն թվականի հունիսի 27-ին վերջինիս ներկայացվել է «Դամկար» ՍՊԸ-ի գնառաջարկի փաթեթը ԵՊՀ Հիմնադրամի «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/114» ծածկագրով մրցույթին մասնակցելու համար: Տեխնիկական սխալի պատճառով «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի պրոֆիլով ներբեռնել է «Դամկար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթը:

vii. https://armeps.am/ppcm/public/bid-report կայքում առկա տվյալների համաձայն՝ «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/114» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն, ում կողմից ներկայացված հայտին կից փաստաթղթերը ներկայացվել են «Դամկար» ՍՊԸ-ի տվյալներով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Դամկար» ՍՊԸ-ի կողմից 15.07.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: (…)

դ. գնային առաջարկ:

(…)

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 4.3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին,

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին,

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին,

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող

բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին,

ե) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում,

Նույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր), և իր կողմից հաստատված գնային առաջարկ:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար:

Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան (որոշ բացառություններով), ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ մասնակից՝ պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող անձ:

ՀՀ կառավարության 06.04.2017թ.-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու մասին» կարգի՝ 5-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ սույն կարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

3) մասնակից (համակարգում՝ տնտեսական օպերատոր)՝ պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով էլեկտրոնային գնմանը մասնակցելու ցանկություն ունեցող և համակարգում գրանցված մասնակից.

4) հայտ՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվող առաջարկ.

Հրավերի 4.1-րդ կետի համաձայն՝ սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնում է հայտ: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:

Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Հայտի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի 2-րդ մասում՝ գնանշման հարցման հայտերը պատրաստելու հրահանգում:

Նույն հրավերի 4.2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, ս.թ. հունիսի 29-ի ժամը 11:00-ն: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:

Հրավերի 3-րդ մասի՝ գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի 2-րդ կետի՝ ընթացակարգի հայտը, համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները):

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

1) «Պիտանելիության չափորոշիչ».

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի«

2.2 իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 1.1-ի«

2.3 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով,

2.4 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).

2) «Ֆինանսական չափորոշիչ».

2.6 գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Հրավերով սահմանվել է նաև, որ հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգ (այսուհետ՝ համակարգ) մուտքագրելիս անհրաժեշտ է առաջնորդվել www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում տեղադրված էլեկտրոնային գնումների կատարման ուղեցույցով, որ էլ հասանելի է հետևյալ հղումով՝ http://gnumner.am/hy/page/ughecuycner_dzernarkner/

Էլեկտրոնային գնումների կատարման ուղեցույցի 3-րդ մասով՝ մասնակցի կողմից էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով բաց, բաց (հրատապ), գնանշման հարցում և մեկ անձից գնումների կատարման ուղեցույցով սահմանվել է հետևյալը.

1. Մասնակիցը՝

1) էլեկտրոնային գնումների Armeps համակարգում հավաքելով «Մուտքանունն» ու «Գաղտնաբառը»՝ մուտք է գործում համակարգ,

2) մուտք գործելով համակարգ «Որոնել» բաժնում ընտրում է «ՄՀ-ներ» ենթաբաժինը և սեղմում «Որոնել» սեղմակը,

3) Մասնակիցը գտնում է իրեն հետաքրքրող գնման ընթացակարգը,

4) «Ցուցադրել ՄՀ ցանկը» սեղմակով ընտրում է «ՄՀ-ի փաստաթղթեր» դաշտը և ծանոթանում ընթացակարգի հայտարարությանը և հրավերին (նաև փոփոխություններին),

5) Ընթացակարգի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար «Ցուցադրել ՄՀ ցանկը» սեղմակով ընտրում է «Պարզաբանումներ» դաշտը և «Պարզաբանման հարցումներ» սեղմակի միջոցով պատվիրատուին է ուղղում իր պարզաբանման հարցումը,

6) Հայտ ներկայացնելու համար «Ցուցադրել ՄՀ ցանկը» սեղմակով ընտրում է «Հայտեր» դաշտը,

7) բացված պատուհանում «բեռնել նախապատրաստման գործիքը» սեղմակի միջոցով բեռնում է ընթացակարգի հայտի պատրաստման գործիքը (եթե այն համակարգչում նախապես տեղադրված չէ) և «բեռնել մրցույթի կառուցվածքը» սեղմակի միջոցով բեռնում է մրցույթի կառուցվածքը: Համակարգչում բեռնվում է xml ֆայլ, որը պետք է բացել նախապատրաստման գործիքով՝ սեղմելով «Բացել փաստաթուղթը» սեղմակը,

8) բացվում է պատուհան՝ «Ջավա (Java)» ծրագրով, որը երեք լեզվով է՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն,

9) եթե գնման ընթացակարգը չափաբաժիններով է, ապա մատակարարը բացված պատուհանի ձախակողմյան հատվածում սեղմում է «Հայտեր» դաշտը և բացված աջակողմյան հատվածում ընտրում է (օգտագործելով «v» նշանը), այն չափաբաժնինը (չափաբաժինները), որին (որոնց) ցանկանում է մասնակցել,

10) «Պիտանելիության» և «Տեխնիկական» դաշտում «Կցել ֆայլ» սեղմակի միջոցով կցում է անհրաժեշտ փաստաթղթերը, իսկ «Ֆինանսական» դաշտում լրացնում է գնի առաջարկը առանց ԱԱՀ-ի և կցում է պահանջվող փաստաթղթերը,

11) ֆայլերը կցելուց հետո սեղմում է «Պահպանել» սեղմակը,

12) բացված պատուհանում նշելով ֆայլի համար որևէ (օրինակ ֆայլ) անուն՝ տալիս է «Պահպանել» հրամանը,

13) սեղմում է «Վավերացնել» սեղմակը,

14) սեղմում է «Փաթեթավորել» սեղմակը,

15) եթե 9-ից 14-րդ քայլերն իրականացնելու ժամանակ համակարգը ցուցադրում է սխալի մասին հաղորդագրություն, ապա սխալը ուղղելուց հետո պետք է կրկին սեղմել «Պահպանել» սեղմակը,

16) փակում է «Ջավա (Java)» ծրագրով բացված պատուհանը,

17) համակարգում բացված պատուհանում սեղմում է «Բեռնել հայտի փաթեթը» սեղմակը,

18) բացված պատուհանը առաջարկում է օգտվողին հաստատել, որ իր հաշիվը ճիշտ է,

19) հաստատելուց հետո օգտվողին առաջարկվում է ընդունել ընթացակարգերի համար օգտվողի համաձայնության քաղաքականությունը,

20) ընդունելուց հետո բացված պատուհանում պետք է ընտրել ուղարկվող փաթեթը, որն արդեն նախապես պահպանված և արխիվացված (կոդավորված) ֆայլն է,

21) գործողությունն ավարտելու համար սեղմում է «Բեռնել» սեղմակը՝ հայտի փաթեթը Armeps համակարգում բեռնելու համար:

2. Համակարգը գեներացնում է մի առանձնահատուկ հայտի փաթեթի ստացականի հերթական համար և հայտի փաթեթի բեռնման համար տեղեկացնում օգտվողին:

3. Եթե հայտերի վերջնաժամկետը փոփոխվում է, ապա մասնակիցը պետք է ներկայացրած հայտը հեռացնի և նոր հայտ ներկայացնի:

4. Մասնակիցը պետք է հետևի իր էլեկտրոնային փոստին, գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխամ փաստաթղթաշրջանառությունն իրականացնելու նպատակով:

5. Եթե մասնակիցը ճանաչվել է ընտրված մասնակից (հաղթող է) և նրան առաջարկվում է կնքել պայմանագիր, ապա նա պետք է կա՛մ ընդունի, կա՛մ մերժի առաջարկը:

Ամբողջ վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով էլեկտրոնային գնման գործընթացի մասնակից կարող է լինել այն իրավաբանական կամ ֆիզիկական անձը, որը գրանցված է Armeps համակարգում (այսուհետ նաև՝ Համակարգ): Էլեկտրոնային գնման գործընթացին մասնակցելու համար մասնակիցը Համակարգի միջոցով պետք է ներկայացնի առաջարկ՝ հայտ, որին կցվում են հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները)՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված 1-ի, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր՝ համաձայն հավելված 1.1-ի, գնային առաջարկ՝ համաձայն հավելված 2-ի, և այլ անհրաժեշտ՝ հրավերով սահմանված փաստաթղթեր: Ընդ որում, էլեկտրոնային գնումների կատարման ուղեցույցի 3-րդ մասի՝ մասնակցի կողմից էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով բաց, բաց (հրատապ), գնանշման հարցում և մեկ անձից գնումների կատարման ուղեցույցի իմաստից բխում է, որ էլեկտրոնային գնումների գործընթացի մասնակիցը համակարգում գրացված և իր սեփական, Համակարգի կողմից վերջինիս տրամադրված «Մուտքանվամբ», Համակարգ մուտք գործած գնումների գործընթացին մասնակցող անձն է:

Վերոնշյալ նորմերի ամբողջացմամբ, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ Համակարգի միջոցով ներկայացվող հայտը ոչ թե միայն ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունն է, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրն է, գնային առաջարկն է, և այլ անհրաժեշտ՝ հրավերով սահմանված փաստաթղթերն են, այլ այն՝ Armeps համակարգում հայտի փաթեթի բեռնումն է՝ այն առաջարկն է, որով մասնակիցը ցանկություն է հայտնում մասնակցելու էլեկտրոնային գնման գործընթացին՝ կից ներկայացնելով վերոնշյալ՝ անհրաժեշտ փաստաթղթերը (տեղեկությունները), ինչպես որ նկարագրված է Հրավերի 3-րդ մասի՝ գնանշման հարցման հայտը պատրաստելու հրահանգի դրույթներում:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից կահույքի ձեռքբերման նպատակով 22.06.2020թ.-ին հայտարարված «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/114» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտին կից փաստաթղթերը՝ Հրավերի Հավելված 1-ը՝ դիմում-հայտարարությունը, Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, ներկայացվել են «Դամկար» ՍՊԸ-ի տվյալներով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է, քանի որ հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացված են «Դամկար» ՍՊԸ-ի անունից, այդ թվում՝ նաև գնային առաջարկը (հավելված 2), որը փոփոխման ենթակա փաստաթուղթ չի հանդիսանում:

30.06.2020թ.-ին Հանձնաժողովին ուղղված գրության համաձայն՝ Թամարա Սայադյանը հայտնել է, որ համակարգում է ինչպես «Դամկար» ՍՊԸ-ի, այնպես էլ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի գնումները: Սույն թվականի հունիսի 27- ին վերջինիս ներկայացվել է «Դամկար» ՍՊԸ-ի գնառաջարկի փաթեթը ԵՊՀ Հիմնադրամի ԵՊՀ-ԳՀՍՊՁԲ-20/114 ծածկագրով մրցույթին մասնակցելու համար: Տեխնիկական սխալի պատճառով «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի պրոֆիլով ներբեռնել է «Դամկար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից կահույքի ձեռքբերման նպատակով 22.06.2020թ.-ին հայտարարված «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/114» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն, ում կողմից հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ Հրավերի Հավելված 1-ը՝ դիմում-հայտարարությունը, Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, ներկայացվել են «Դամկար» ՍՊԸ-ի տվյալներով:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն

ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով գործով ներգրավված անձանց ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Ընկերությունը Բողոքներ քննող անձին չի ներկայացրել վերջին շաբաթների ընթացքում ինտերնետային կապի խնդիրների մասին որևէ վերաբերելի ապացույց, և այն որ ինտերնետային կապի խնդիրները հանգեցրել են «Դամկար» ՍՊԸ-ի էջից օգտվելու անհնարինությանը, իսկ «Արգավանդի Կահույք» ՍՊԸ-ի՝ ոչ: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Պատվիրատուն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ ընթացակարգին «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ Հրավերի Հավելված 1-ը՝ դիմում-հայտարարությունը, Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, ներկայացվել են «Դամկար» ՍՊԸ-ի տվյալներով, որի արդյունքում հայտի կից փաթեթից բացակայել են հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ այդ թվում և գնային առաջարկը, որի

բացակայության պայմաններում «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտն ենթակա է մերժման՝ առանց շտկման հնարավորության ընձեռնման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/114» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, կայացնելով «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում, գործել է իրավաչափ:

Ուստի «Դամկար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Դամկար» ՍՊԸ-ի կողմից 15.07.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/83 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**